



http://cfoa.am

Համայնք-ՀամաՏեղ



http://celog.am

ՀամաՏեղ ծրագրի պաշտոնաթերթ Official Newspaper of CELoG program

Հրատարակվում է 2003 թվականից

Հունվար 2018, թիվ 1(113)

Խմբագրական ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՈՒՄԸ ԻՆՔՆԱՃԱԽՍԱՃԱԾԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Է

2018թ. հունվար ամսվա ընթացքում Համայնքների ֆինանսիստների միավորումը համայնքներից ստանում է մտահոգություններ այն մասին, որ նրանք մարզպետարանների միջոցով տարօրինակ «հանձնարարական» են ստացել ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունից: Ըստ այդ «հանձնարարականի», համայնքներին առաջարկվում է 2018թ. բյուջեները կազմելիս աղբահանությունը եւ սանիտարական մաքրումը նախատեսել որպես ինքնաֆինանսավորվող կամ ինքնաճանաչման ծառայություն:

Նման «հանձնարարականի» գոյությունը, ինքնին անընդունելի է, իսկ առաջարկվող մոտեցումը՝ չիմաստավորված եւ ռիսկային: Այս առումով մի քանի պարզաբանումներ անենք:

Մեր օրենսդրությունը հստակորեն զանազանում է «աղբահանություն» եւ «սանիտարական մաքրում» հասկացությունները: Հասկանալի է, որ նշված երկու ծառայությունները մեծապես կապված են իրար եւ գործնականում դիտարկվում եւ իրականացվում են որպես մեկ ամբողջականություն: Սակայն սա որեւէ կերպ չի վերաբերում այս ծառայությունների ֆինանսավորման հարցերին:

«Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանվում է, որ համայնքում գանձվող աղբահանության վճարը նախատեսված է միայն աղբահանության իրականացման համար, այսինքն՝ սանիտարական մաքրման բաղադրիչը աղբահանության վճարի մեջ չի մտնում: Միեւնույն ժամանակ, օրենքի մեկ այլ դրույթով սահմանվում է, որ թե՛ աղբահանությունը եւ թե՛ սանիտարական մաքրումը ֆինանսավորվում են համայնքի բյուջեից:

Տրամաբանական հարց է ծագում. եթե նշված ծառայությունները ֆինանսավորվում են համայնքի բյուջեից, սակայն աղբահանության վճարը պետք է նախատեսված լինի միայն աղբահանության համար, ապա ի՞նչ հիմնավորմամբ պետք է աղբահանության վճարը ծածկի նաեւ ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրումը: Եվ սա այն դեպքում, երբ 2017թ. տվյալներով, աղբահանության համար գանձվող վճարի գծով պլանավորված մուտքերի կատարողականը՝ բոլոր համայնքները միասին վերցրած, կազմել է ընդամենը 90.5%: Այսինքն, տեղական իշխանություններին ոչ միշտ է հաջողվում ամբողջությամբ գանձել աղբահանության վճարի գծով պլանավորված մուտքերը, որի պատճառները ինչպես օբյեկտիվ են, այնպես էլ՝ սուբյեկտիվ:

Մյուս կողմից, աղբահանության եւ սանիտարական մաքրման համար համայնքների բյուջեներից կատարված ծախսերը եականորեն գերազանցում են աղբահանության վճարի գծով մուտքերը: Պարզության համար նշենք միայն, որ համայնքների բյուջեներում այդ ուղղությամբ պլանավորված ընդհանուր ծախսերի մեջ աղբահանության վճարի մուտքերի (սույնիսկ 100% գանձման պարագայում) մասնաբաժինը կազմում է ընդամենը 49%: Այսինքն՝ աղբահանության վճարները միայն կիսով չափ են ծածկում այդ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը:

Այնպիսի է, որ համայնքներում աղբահանությունը եւ սանիտարական մաքրումը ինքնաճանաչման ծառայությունները հարձնելու համար անհրաժեշտ է աղբահանության տեղական վճարի դրույթաչափը բարձրացնել առնվազն 2 անգամ: Ընդ որում, սույնիսկ Երեւանի բյուջեում աղբահանության վճարի մուտքերը աղբահանության եւ սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման ծախսերը չեն ծածկում. ծախսերը մուտքերից շուրջ 1.7 անգամ շատ են, կամ մուտքերը կազմում են ծախսերի ընդամենը 59%-ը:

Աղբահանության վճարի դրույթաչափի բարձրացման նպատակահարմարության եւ սոցիալական հետեւանքների մասին եզրահանգումներ կատարելուց ձեռնպահ ենք մնում:

Նշենք նաեւ, որ միջազգային պրակտիկայում հայտնի չէ որեւէ դեպք կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող որեւէ երկրում, որտեղ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների սանիտարական մաքրումը ինքնաֆինանսավորվող կամ ինքնաճանաչման ծառայություն լինի: Վերջինս անմիջականորեն ֆինանսավորվում կամ սուբսիդավորվում է տեղական բյուջեի ընդհանուր մուտքերի հաշվին:

Այս հարցում ՀՀ պետական լիազոր մարմնի դիրքորոշումը խոցելի է նաեւ այն իմաստով, որ չի նշվում այն տրամաբանությունը կամ հիմնավորումը, թե ինչ սկզբունքով սանիտարական մաքրման ծառայությունը պետք է դիտարկվի որպես ինքնաֆինանսավորվող, իսկ, օրինակ, գիշերային լուսավորությունը, համայնքային ենթակայության ճանապարհների եւ հարակից կահավորանքի սպասարկումը կամ այլ ծառայություններ՝ ոչ:

Ցանկանում ենք արձանագրել, որ վերոնշյալ խնդիրների վերաբերյալ պետական համապատասխան մարմինների մոտեցումը մասնագիտորեն եւ սոցիալական տեսանկյունից խիստ խոցելի է եւ կիրառելու պարագայում մեծ հարված է հասցնելու ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգի՝ սահմանադրորեն ամրագրված ինքնուրույնությանը:

Լիաժույս ենք, որ պատկան մարմինները գերծ կման տեղական իշխանությունների բացառիկ իրավասությունը հանդիսացող գործընթացներին անհարկի եւ չիմաստավորված միջամտություն ցուցաբերելու նման փորձերից:

Վ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՇԱՅԲԱՅԱՆ
Դ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Խմբագրական խորհրդի անդամներ

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ Է

«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու Արմեն Զեչիշյանը:



- Պարոն Զեչիշյան, Դուք մեծ ներդրում ունեք ՀՀ մարզային եւ համայնքային միջնաժամկետ եւ կարճաժամկետ պլանավորման գործառնության զարգացման գործընթացներում: Որպես փորձագետ, ինչպե՞ս եք գնահատում ներկայում ՀՀ տեղական ինքնակառավարման ոլորտում գոյություն ունեցող պլանավորման համակարգը, մասնավորապես՝ հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդաբանական բազան:

- Տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերն այսօր, օրենսդրորեն ներդրվելուց ավելի քան քսան տարի անց, ցավոք, դեռ հեղհեղուկ վիճակում են: Մինչ հարատեւ փոփոխությունները պահանջում են իրավիճակային եւ նորանոր լուծումներ, մոռացության է մատնվում այն հանգամանքը, որ պլանավորումը ՏԻ կայացման եւ զարգացման գործիք է: Եթե ՏԻՄ-երը գիտեն, թե ինչի համար են մասնակցել ընտրությունների եւ ստանձնել համայնքը ղեկավարելու պատասխանատվությունը, ապա նրանց համար պետք է օգտակար եւ պատվաբեր անհրաժեշտություն լինի՝ դրված նպատակներին հասնելու համար գործողությունների ձեւակերպումը, դրանց ժամկետավորումը՝ ըստ առաջնահերթությունների, անհրաժեշտ միջոցների, եւ դրանց բացերը լրացնելու եղանակների սահմանում, կատարողականի ընթացքին հետեւելը եւ արդյունքները գնահատելը: Այն, ինչ սահմանում է վերոնշյալը, արդեն պլան է, ծրագիր: Այդ է պատճառը, որ համայնքի զարգացման հնգամյա ծրագիր փաստաթուղթը պետք է, ըստ իս, առաջին հերթին լինի ՏԻՄ-երի պաշտոնների համար մրցող ուժերի նախընտրական ծրագիր եւ քաղաքական հանձնառություն՝ հակիրճ, հստակ, համայնքի միջնաժամկետ հեռանկարում իրական վիճակի արտապատկերում:

Պլանը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ տվյալ ժամկետում անելիքների ըստ կարեւորության կազմակերպումը: Այն, մի կողմից, համայնքի բնակչությանը, մյուս կողմից՝ արտաքին աշխարհին որպես միասնական հանրություն ներկայանալու արժանապատիվ գործիք է, մի պայմանով՝ եթե մշակված է ստանձնած գործառնություններն առավելագույնս համակարգված կատարելու, առկա ֆինանսական եւ այլ ռեսուրսները ողջամիտ բաշխելու, կատարման ընթացքը չափելի ցուցանիշների միջոցով հսկողության տակ պահելու, հիմնավորելու, շեղումները նվազագույնի հասցնելու (կամ դրանց պատճառներից ելնելով՝ անելիքները վերանայելու), հետագա քայլերը ճշգրտելու եւ նախատեսելու, լրացուցիչ միջոցներ համայնք բերելու վճարականությամբ:

← էջ 1

Մեթոդաբանությունները խորհրդատվական եւ օժանդակ կյուրեր են, որոնք գալիս են մեթոդապես աջակցելու կառավարման պետական, տարածքային կամ տեղական մարմիններին՝ իրենց վրա իրավական եւ բարոյական օրենքներով դրված՝ վերոնշյալ առաքելությունն ի կատար ածելու գործում:

Մեր երկրում գոյություն ունեցող մեթոդաբանությունները, որոնց մասին հարցնում եք, որակյալ են, համապարփակ, անհրաժեշտ ցուցանիշային բազաներով համալրված: Նրանք պարունակում են որակյալ պլաններ մշակելու համար գրեթե բոլոր անհրաժեշտ եւ բավարար պարագաները: Գրեթե, որովհետեւ մեթոդաբանությունը կարծրացած փաստաթուղթ չէ, այն ենթակա է քննաբար արդիականացման՝ ըստ բնագավառում ի հայտ եկող նոր գաղափարների, մոտեցումների եւ գործիքների: Եվ դարձյալ՝ գրեթե, որովհետեւ ի վերջո վարչական որեւէ մոտեցման, հայեցակարգի, գործիքի կամ առհասարակ գործունեության եւ, բնական է՝ պլանի միակ ճշմարիտ գնահատականը՝ դրանց գործադրման արդյունքում մատուցվող ծառայությունից բնակչի բավարարվածության կամ դժգոհության աստիճանն է:

Հնգամյայի մշակման մեթոդաբանությունը հայտնի է, ուստի առանձին ցանկանում եմ նշել բազմաբնակավայր համայնքների համար դրա լրամշակված տարբերակը: Երկրում ընթացող վարչատարածքային վերափոխումները հաշվի առնելով՝ սա այն խորհրդատվական, մեթոդական փաստաթուղթ է, որը գործածելով՝ համայնքները կարող են կազմակերպել պլանավորման աշխատանքները: Փաստաթուղթը մշակվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՐԸ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի եւ Համայնքների ֆինանսիստների միավորման (ՀՖՄ) փորձագետների կողմից եւ փորձարկվել մի շարք խոշորացված համայնքներում (Թումանյան, Տաթև եւ այլն):

Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունն (ՏԿՁՆ) էլ մշակել է սոցիալ-տնտեսական զարգացման պլանների մշակման մեթոդական ուղեցույց՝ տնտեսական բազմաբնակավայրի մշակման մեթոդական ուղեցույց՝ տնտեսական բազմաբնակավայրի մշակման մեթոդական ուղեցույցը: Տարբեր աջակից կառույցներ նույնպես մշակել են խորհրդատվական բնույթի կյուրեր՝ որպես համապատասխան միջնաժամկետ միջամտությունների իրականացման ներքո կարողությունների զարգացման եւ պլանավորման հմտությունների հզորացման բաղադրիչ (ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, ԵՄ եւ այլն):

Մեթոդաբանությունների նման բազմաբնակությունն ու բազմաբնակությունը կարող է մեթոդական հենքը միասնականացնելու ցանկություն առաջացնել: Մեկ այլ մոտեցում է, որին ավելի կողմակից եմ, այդպիսի հարուստ գիտելիքային ռեսուրսն ընկալելը որպես համայնքների զարգացման գրավական՝ իրենց առավել հարմար ձեւա-

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ Է

«Համայնք-ՀամաՏեղի» գրուցակիցն է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՐԸ) «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի խորհրդատու Արմեն Բեշիշյանը:



չափն ու տարբերակը (նույնիսկ եթե այն մի քանիսի խառնուրդ լինի) ընտրելու տեսանկյունից: Վերջին հաշվով մեթոդաբանությունն օրենք ու կարգադրությունն է, այլ՝ օժանդակ կյուր: Կարելի է, որ այն համակարգված եւ համապատասխան օժանդակ կյուրերով եւ ծառայություններով (օրինակ՝ տվյալ մեթոդաբանության այս կամ այն հարցի, դրույթի վերաբերյալ ՏԻՄ-երին մեթոդական եւ խորհրդատվական աջակցություն՝ ՏԿՁՆ եւ այլ գործընկերների համատեղ ուսուցողական այցեր համայնքներ, առցանց հարցուպատասխաններ, բանավիճակային հարթակներ եւ այլն) հագեցված լինի, ինչը, կարծում եմ, ինչպես ոլորտի լիազոր մարմնի, այնպես էլ աջակից կառույցների անելիքն է:

Մենք մի մեծ բաց ունենք մեր պլանավորման համակարգում, որը, ցավոք, անտեսում են ինչպես կառավարիչները, այնպես էլ՝ փորձագետները: Միջազգային առաջադեմ փորձի ներկրումով զբաղված՝ մենք մինչեւ օրս հայոց համայնքային, այդ թվում՝ ՏԻ պատմական եւ ավանդույթային կառավարման համակարգերի գործունեւ մեր օրերում էլ այժմեական մեխանիզմների, գործիքների ոչ մի համապարփակ հետազոտություն կամ վերլուծություն չունենք: Մինչդեռ այս վերջիններն են այն հիմքը, որի շուրջ, որի վրա եւ որը բարելավելով, արդիականացնելով՝ շահավետ կլիներ ներմուծել միջազգային փորձն ու գիտելիքը: Սա թույլ կտար մեզ ավելի հասկանալի տրամաբանությամբ, պատճառահետեւանքային կապերի գիտակցմամբ յուրացնել արտհամայնքներում փորձված ու հաջողված նորամուծությունները: Այլապես «նորություն», «առաջադիմություն», «ժամանակակից» հասկացությունները կորցնում են իրենց բուն իմաստը. «ինչի՞» համեմատ նոր, առաջադեմ, ժամանակակից»: Չէ՞ որ հայոց համայնքը գործել է ոչ միայն ԽՍՀՄ բռնապետության, այլ նաեւ դրանից շատ ավելի վաղ ժամանակներից եւ, անկասկած, դեր եւ նշանակություն ունեցել այն փաստի համար, որ մենք եկել հասել ենք 21-րդ դար:

- Ինչպե՞ս եկաք այն եզրահանգման, որ առաջացել է համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման եւ ներդրման անհրաժեշտություն:
- Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագրերն առավելապես

հիմնավորված որոնել լրացուցիչ ֆինանսական միջոցներ, որոնք անհրաժեշտ են համայնքի բարեկեցության մակարդակը բարձրացնելու համար:

ՏԱՊ-ը հնգամյան իրականացնելու, ինչպես նաեւ գործողությունները բյուջեի հետ կամրջելու գործուն միջոց է նաեւ: Այսօր համայնքում հնգամյա ֆինանսական պլանավորումը՝ կանխատեսումների եւ վերլուծությունների հետ միասին անհնարին տիրույթից է: Մինչդեռ տարեկան ունի թե՛ գիտելիքների, հմտությունների հիմք. ֆինանսիստներն առավել տեղյակ են բյուջե կազմելու նրբություններին, եւ թե՛ ներդրումային քաղաքականությունն ըստ կարելուհույն խնդիրների ծրագրավորելու հեռանկար:

ՏԱՊ-ը ներառում է ոչ միայն կապիտալ (ենթակառուցվածքային) ծրագրերը, այլ նաեւ աշխատակիցների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումները եւ ծախսային ուղղությունները: Օրինակ, եթե համայնքում որեւէ կազմակերպություն իրականացնում է կարողությունների զարգացմանն ուղղված ծրագիր կամ միջոցառում, այն պետք է երեւա համայնքի ՏԱՊ-ում՝ այլ միջոցառումների հետ միասին արտացոլված լինելով, ցույց տալու համայնքում տեղի ունեցող գործողությունների ամբողջական պատկերը:

Եվ վերջապես, ՏԱՊ-ի մշակումն ու գործադրումը, որպես կառավարչական եւ ՏԻՄ-երի պարտականությունների իրականացման վարչարարական գործիք, թույլ է տալիս ի հայտ բերել համայնքում առկա բացերը ֆինանսական, կարողությունների, ենթակառուցվածքների, սոցիալ-մշակութային տեսանկյուններից, հարստացնել եւ հավաստի դարձնել տեղեկատվության աղբյուրները, շուկայավարական քայլեր ձեռնարկել՝ որպես համայնքն ու իր մրցակցային առավելությունները եւ որակյալ կառավարման համակարգը արտաքին աշխարհին լավագույնս ներկայացնելու, հնարավոր ներդրողների ուշադրությունը եւ ֆինանսական միջոցները համայնք բերելու առաջնահերթ խնդիր լուծում:

Հայաստանի համայնքներում մինչեւ այս չկար մի փաստաթուղթ, ուր միատեղված լինեին տվյալ տարվա մեջ իրականացվող միջոցառումները, դրանց ֆինանսական եւ ոչ-ֆինանսական ներդրումները, միջոցառումների մոնիտորինգի եւ գնահատման համակարգը: Նշեմ նաեւ, որ, հաշվի առնելով համայնքներում ծրագրային բյուջետավորման ներդրմանն ուղղված աշխատանքները՝ ՏԱՊ-ը այն հիմքն է, որը բյուջեն դարձնում է ծրագրային:

Ես նախատեսում եմ ԳՄՐԸ-ի կողմից մշակված եւ ՀՖՄ-ի կողմից իրականացված ծրագրի ավարտին, արդյունքները վերլուծելուց հետո՝ հավանաբար,

հաջորդ տարվա առաջին եռամսյակում, հանդես գալ նաեւ ՏԱՊ-երի հետագա զարգացմանը նվիրված մի վերլուծական հետազոտությամբ՝ առավել մանրամասնությամբ անդրադառնալով ՏԱՊ-երի եւ բյուջեի, ՏԱՊ-երի եւ մոնիտորինգի եւ գնահատման համակարգի, ինչպես նաեւ ՏԱՊ-երի եւ համայնքի զարգացման երկարաժամկետ ռազմավարական պլանավորման հարցերին:

- Այսօր հանրապետության 18 բազմաբնակավայր համայնքներում Ձեր կողմից քայլեր են ձեռնարկվել ՏԱՊ-ի ներդրման ուղղությամբ: Ի՞նչ ընթացքում է այս գործընթացը:

- ՏԱՊ-ի ներդրումը մեր՝ ԳՄՐԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագրի գաղափարն էր, որը քննարկվելով ՏԿՁՆ-ի հետ՝ ստացավ տեխնիկական առաջադրանքի տեսք: Հայտարարված մրցույթում հաղթող ճանաչվեց ՀՖՄ-ն, որի փորձագետները մեր ծրագրի հետ համատեղ պատրաստեցին մեթոդաբանությունը եւ գործողությունների պլանը:

Մեթոդաբանությունը, ՏԱՊ-ի ձեւաչափը, օրինակելի ձեւերը եւ ձեւաթղթերը 2017թ. սեպտեմբերի 6-ին ներկայացվեցին ՏԿՁՆ-ում կազմակերպված աշխատաժողովում՝ շուրջ 50 մասնագետների, այդ թվում՝ խոշորացված 18 գործընկեր համայնքների ղեկավարների, դոկոր կազմակերպությունների ներկայացուցիչների (ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն, Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գրասենյակ) մասնակցությամբ եւ հավանության արժանացան: Արդյունքում, առաջին եւ երկրորդ փուլով համայնքային համապատասխան ծառայողների հետ միասին մշակվեցին, հանրային լուծումների եւ ավագանիներին ներկայացվեցին այս համայնքների ՏԱՊ-երը: Ըստ արձագանքների, ՏԱՊ-ի մշակման աշխատանքներում ներգրավվածները ընդգծում էին փաստաթղթի օգտակարությունը համայնքի համար:

Հետագա քայլերից են՝ փորձի տարածումը բոլոր մյուս համայնքներում, ՏԱՊ կազմելու օրենսդրական պահանջը, ՏԱՊ-ի կազմման ինտենսիվ դասընթացների կազմակերպումն այն համայնքների համար, որոնք նոր են սկսում դրանով զբաղվել, ընդ որում՝ օգտվելով արդեն փորձ ունեցողների գիտելիքներից ու հմտություններից, ինչպես նաեւ ՏԿՁՆ մեթոդական եւ տեխնիկական աջակցությունից: Բնականաբար, հետագա աշխատանքների շարքում շատ կարելի է գործող մեթոդաբանության կատարելագործումը, որի հիմքում պետք է լինեն իրական պայմաններում դրա գործադրումից քաղած դասերը եւ փորձը՝ պատշաճ ուշադրություն դարձնելով հենց ՏԻՄ-երի կարծիքներին:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ՝

Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի օրենսդրությունը տեղական ինքնակառավարման մարմիններին չի տվել գործուն միջոցներ եւ շահագրգռվածություն՝ տնտեսական զարգացման ծրագրեր իրականացնելու համար:

Չնայած դրան՝ կառավարման բոլոր մակարդակներում քաջ գիտակցում են ստեղծված իրավիճակի լրջությունը եւ ընդունում, որ միայն համատեղ ջանքերով է հնարավոր արդյունք ապահովել:

Հատկապես այնպիսի կարեւոր օղակ, ինչպիսին համայնքն է, չի կարող անմասն մնալ տնտեսական զարգացման գործընթացներից:

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի թիվ 25 արձանագրային որոշման «Տարածքային զարգացման հայեցակարգ» հավելվածում խիստ կարեւորվում են առանձին վարչատարածքային միավորների արդյունավետ զարգացման հիմնախնդիրները, որոնց լուծումը ակնհայտորեն էական առաջնությամբ կապահովի երկրի սոցիալ-տնտեսական ոլորտներում՝ ստեղծելով զարգացման համապատասխան նախադրյալներ:

Տնտեսության զարգացման պատասխանատվությունը բազմաբեւեռ է: Հիմնական բեռը դրված է կառավարության վրա, քանի որ այն տիրապետում է տնտեսության զարգացման էական լծակների մի շարք մեխանիզմների:

Չարգացման մյուս մակարդակը համայնքայինն է:

Տնտեսության կարգավորումը եւ տարածքային զարգացումը տեղական իշխանության անկյունաքարային գործառույթներից մեկն է. նրա հիմնական խնդիրը սոցիալ-տնտեսական գործընթացների կանոնակարգումն է, հավասարակշռված զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ձեւավորումը, բնակչության բնականոն գործունեության ապահովումը, ինչպես նաեւ տարածքի կենսագործունեության համար կարեւոր այլ հարցերի լուծումը:

Տնտեսական զարգացման բազմաթիվ մոտեցումներ կան, մոդելներ, գիտական ուղղություններ եւ ամբողջ դպրոցներ են աշխատում այս ուղղությամբ: Սակայն պետք է նշել, որ այս պահին չկա ամբողջական պատկերացում հարցի բովանդակային առավել ընդգծված հիմնախնդիրների լուծումների սպառնիչ մեխանիզմների վերաբերյալ: Յուրաքանչյուր երկրի օրինակ յուրահատուկ է եւ չի ընդգրկում բոլոր ապեկտները: Սակայն նպատակը մեկն է՝ զարգացնել տնտեսությունը եւ ապահովել բարեկեցություն:

Որոշ երկրներ, ունենալով զարգացած արդյունաբերության տասնամյակների փորձ, հազարավոր մրցունակ ձեռնարկություններ, որակյալ աշխատուժ ու տնտեսական զարգացման հիանալի ենթակառուցվածքներ, առաջ են անցել մի շարք երկրներից, ստեղծելով զարգացման բեւեռներ:

Համայնքը այն միջավայրն է, որտեղ ձեռնարկությունները ծնվում են եւ ստանում գոյության առաջնային սնունդ՝ շուկա, հումք, աշխատուժ:

Այս միջավայրում է նաեւ, որ ձեռնարկությունների գոյության վրա ազդում են հարակից հարաբերությունները՝ մարդկանց վերաբերմունքը դեպի գործարարը, դեպի պայմանագրերի կատարումը, պատասխանատվությունը ստանձնած գործերի հանդեպ, առաջնորդությունը եւ նախաձեռնողականությունը:

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման կարեւոր պայ-

Իշխան Սոխայան.
աշխատում է Ախթալայի համայնքապետարանում, որպես տեղական տնտեսական զարգացման, գնումների, գույքահարկի եւ հողի հարկային բազայի վարման պատասխանատու: Սովորել է Մոսկվայի Վիտեի անվան տնտեսագիտության եւ իրավունքի համալսարանում՝ տնտեսագիտություն, եւ Մոսկվայի Բիզնեսի միջազգային ինստիտուտում՝ հաշվապահություն, աուդիտ:



մաններից մեկը համայնքների պահովվածությունն է համապատասխան ֆինանսական ռեսուրսներով:

ՀՀ տարածքում նկատելիորեն խորանում է սոցիալ-տնտեսական եւ ֆինանսական շրջանակների անհամաչափությունը:

Նշված խնդրի պարզաբանման համար դիտարկենք, օրինակ, հետեւյալ աղյուսակը:

Աղյուսակ

Հ/Հ	Մարզի անվանումը	Եկամուտների հաշվարկ 2016թ. տարեկան (հազ. դրամ)	Եկամուտների հաշվարկ 2017թ. տարեկան (հազ. դրամ)	2017թ. եկամուտների աճը 2016թ. նկատմամբ %	Ֆինանսական համահարթեցման դրույթ 2017թ. (հազ. դրամ)
1	Երևան	75 704, 5	84 676, 7	11,8	13 430, 3
2	Արագածոտն	3 596, 1	3 685, 3	2,5	2 428, 1
3	Արարատ	6 552, 4	6 589, 9	0,6	4 481, 4
4	Արմավիր	6 848, 1	7 066, 6	3,2	4 388, 5
5	Գեղարքունիք	5 698, 9	5 803, 4	1,8	4 341, 61
6	Լոռի	6 484, 5	6 646, 8	2,5	4 301, 4
7	Վոտայք	6 981, 4	7 193, 3	3,0	4 230, 8
8	Շիրակ	6 627, 6	6 682, 1	0,8	4 413, 3
9	Սյունիք	4 434, 8	4 635, 4	4,5	2 708, 1
10	Վայոց Ձոր	1 639, 9	1 733, 8	5,7	994, 8
11	Տավուշ	3 285, 9	3 341, 1	1,7	2 349, 7
	Ընդամենը	127 854, 2	138 054, 8	7,9	48 068, 31

Ինչպես կարող ենք դիտարկել, համայնքային եկամուտները եւ դրանց հավաքագրումը բավականին տարբերակվում են ըստ մարզերի:

Վերջին տարիներին ՀՀ տնտեսական քաղաքականության շեշտադրումը հիմնական տեղական գործունեների զարգացման վրա է եղել: Տարբեր համայնքներում ճանապարհաշինական, գազաֆիկացման, ոռոգման եւ խմելու ջրի հասանելիության ապահովումը եղել է քաղաքական առաջնություն:

Տեղական տնտեսական զարգացման արդի հրամայականը հասկանալու համար ստորեւ ներկայացվում են գործունեի այն բոլոր խմբերը, որոնք ունեն նկատելի ազդեցություն՝

- Տեղական տնտեսական զարգացման թիրախները
- Տնտեսական զարգացմանը նպաստող տեղական գործունեները
- Տնտեսական քաղաքականության գերակայություն
- Տնտեսական զարգացման կայունություն

նություն

• Համայնքում տնտեսության զարգացման կառավարում

• Տեղական տնտեսական զարգացման գործընթացների կառավարում:

Հատկապես մեծ դեր ունի տնտեսական զարգացմանը նպաստող տեղական գործունեների հետազոտությունը, քանզի՝

1. Ցանկացած ձեռնարկության եւ ընդհանուր տնտեսական զարգացման համար էական են ֆիզիկական ենթակառուցվածքները,

2. Բացի ֆիզիկական ենթակառուցվածքներից եւ ռեսուրսների մատակարարումից, ձեռնարկությունները նպաստավոր գործարար միջավայրի կարիք ունեն: Մասնավորապես ՏԻՄ-երը պետք է նպաստեն այդպիսի միջավայրի ձեւավորմանը եւ իրենց գործունեությամբ լրացուցիչ խոչընդոտներ չառաջացնեն:

3. Ձեռնարկությունների մրցակցության վրա էական ազդեցություն ունեն նաեւ համայնքում առկա փոխլրացնող բիզնեսները՝ մատակարարների, ծառայություններ մատուցողների, գնորդների եւ այլն:

Գործարարության զարգացումը հնարավոր է աջակցության մրցունակ ծառայությունների գուժակցմամբ:

Շոշափելի տեղական գործունեներ

- * Աշխարհագր. դիրք
- * Որակավորված աշխատուժ
- * Տրանսպորտային հաղորդակց. ենթակառուցվածքներ
- * Էներգիա եւ բնական միջավայր
- * Հարկերի եւ տուրքերի թափանցիկ սուբսիդավորման մեխանիզմներ
- * Ջրամատակարարում
- * Բնակչության պայմաններ
- * ՏԻՄ համագործակցություն
- * Կրթական կազմակերպություններ
- * Բիզնես միջավայր
- * Առողջապահական կառույցներ
- * Աջակից կառույցներ
- * Սոցիալական վիճակ
- * Պետական ծրագրեր
- * Մշակութային օջախներ
- * Հարակից ծյուղերի առկայություն

Մշակված քաղաքականությամբ նախատեսվող միջոցառումների կատարման անհետեւողականությունը, համապատասխան ռազմավարության, ինչպես նաեւ հիմնավոր սկզբունքների եւ մոտեցումների բացակայությունը հանգեցրել են հանրապետության տարածքային զարգացման խիստ բեւեռացմանը:

Այս հանգամանքը ուղղակիորեն եւ մեծապես նպաստել է ՀՀ տարածքներում բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմանը եւ առկա ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործմանը:

Իհարկե, զարգացման անհամաչափություններն այս կամ այն չափով բնորոշ են բոլոր երկրներին: Դրանք պայմանավորված են աշխարհագրական, բնակլիմայական, ժողովրդագրական եւ տնտեսական զարգացման վրա ազդեցություն ունեցող մի շարք գործոններով, որոնց քննարկումը այս կայքի բուն թեման չի կազմում:

Տարածքային անհամաչափությունների նվազեցումն իրականացվում է տարածքների մրցունակությունը բարելավելով եւ նոր աշխատատեղեր ստեղծելով, տարածքային տնտեսության կարգավորման նոր եղանակների արդյունավետ կիրառմամբ, ինչը հնարավորություն կտա նաեւ տարբեր նախագծերով տեղեկատվության հասանելիության ապահովմամբ, նորամուծությունների կիրառման արագացմամբ եւ ներդրումների ներգրավմամբ լուծելու ենթակառուցվածքային հիմնախնդիրները:

Տեղական մակարդակում պետական քաղաքականությունն իրենից ներկայացնում է համայնքի զարգացման օբյեկտիվ միտումների եւ դրանում իրենց շահի վերաբերյալ մարդկանց գերակշռող մասի սուբյեկտիվ դատողության հանրագումար:

Տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ կարեւորվում է առանձին տարածաշրջանների զարգացմանը միտված եւ վերոնշյալ սկզբունքներով մշակված համալիր ու ամբողջական ծրագրերի իրականացումը:


Տարածքների զարգացման ծրագրերի մշակման կարեւորությունը ու պլանավորման ժամանակակից եղանակների օգտագործման անհրաժեշտությունն ակնհայտ են: Չարգացած երկրներում առավել կիրառելի են տարածական, ֆինանսական եւ ռազմավարական պլանավորման տեսակները:



ՀԱՄԱՅՆՔԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՔԱՐ

• Տարածական զարգացման պլանավորման եւ կանխատեսման գործիք է տարածքի զարգացման գլխավոր հատակագիծը: Տարածքների զարգացման ծրագրային ապահովվածության անհրաժեշտությունը մեծացնում է գլխավոր հատակագծի մշակման եւ հաստատման կարեւորությունը, որը քաղաքաշինության տարածական պլանավորման հիմնական փաստաթուղթն է: Վերջինիս հիմնական նպատակներն են՝ տարածքի կայուն զարգացման եւ կենսագործունեության բարենպաստ միջավայրի ստեղծումը, էկոլոգիական անվտանգության ապահովումը եւ բնության, ինչպես նաեւ մշակութային ժառանգության պահպանումը:

• Ֆինանսական պլանավորման, որի հիմնական օբյեկտը ֆինանսական ռեսուրսներն են եւ տարածական պլանավորման եղանակներին զուգընթաց բազմաթիվ երկրներում լայնորեն կիրառվում է ռազմավարական պլանավորումը: Այն ենթադրում է տարածքի զարգացման ռազմավարական ծրագրի կազմում:



ռազմավարական ծրագիրը տարածքի ապագայի մասին երկարաժամկետ պատկերացումների ամբողջություն է եւ պարունակում է այն արդյունքները, որոնց ձգտում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Յուրաքանչյուր քաղաքականություն կամ որոշում ենթադրում է կոնկրետ ծրագրեր եւ բյուջե:

Տնտեսական զարգացման գերակայությամբ համայնքներում սոցիալական եւ ենթակառուցվածքային ծրագրերը միտված են առաջին հերթին տնտեսական զարգացման մարտահրավերների եւ խնդիրների լուծմանը: Վերը ներկայացված պատկերում երեք ծրագրային ուղղություններն են՝ տնտեսական ուղղությամբ գերակա զարգացման նախապայմանով:

ԻՇԽԱՆ ՍՈՒՍՎԱՅԱ
Տնտեսական գիտությունների թեկնածու,
ՌԴ ԳԱՍ Վ.Ա.Ստեկլովի անվան մաթեմատիկական ինստիտուտի դոկտորանտ

Համայնքների խոշորացման հետեւանքով կրճատվել է կանանց ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման գործընթացներում: «Կինը եւ հասարակությունը» տեղեկատվական-վերլուծական հարթակի հրապարակած տվյալների համաձայն՝ 2016 թվականին համայնքապետերի 2,02%-ը կանայք էին (793 համայնքապետերից 17-ը կամ յուրաքանչյուր 46-րդ համայնքի ղեկավարը), մինչդեռ 2017-ի տվյալներով՝ համայնքապետերի 1,4%-ն են կանայք (502 համայնքապետերից 7-ը կամ յուրաքանչյուր 72-րդ համայնքի ղեկավարը): Խոշորացման հետեւանքով սվազել է նաեւ ավագանիների կին անդամների թիվը: Մինչեւ խոշորացումը ավագանիների կազմում կանանց ներկայացվածությունը 12% էր, իսկ խոշորացումից հետո՝ 5,5%: Այսինքն՝ խոշորացման հետեւանքով կանանց ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում սվազել է կեսից ավելի:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱԿՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԻՄ-ԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԹԻՎԸ ԿԻՍՈՎ ՉԱՓ ՆՎԱԶԵԼ Է



ճանաչում եւ նայում են միայն որպես կնոջ», - ասում է Չաքարյանը՝ բացատրելով, թե որն է ՏԻՄ-երում կանանց ներկայացվածության սվազման պատճառը: Գենդերային հարցերով փորձագետը նշում է, որ համայնքների խոշորացման պարագայում տղամարդիկ եւս տուժում են. համայնքային կառավարումից դուրս են մնում նաեւ փոքր համայնքների ներկայացուցիչ տղամարդիկ, սակայն, ամեն դեպքում, կարծաթիպ հոգուտ տղամարդկանց է գործում: Չաքարյանն ասում է, որ ըստ բնակավայրերի ներկայացուցչական մոդելի կիրառման պարագայում կանայք, հնարավոր է, դուրս չմնային համայնքների կառավարումից: Նրա խոսքով՝ հարցումների արդյունքներով պարզվել է, որ կանանց դուրս մղման պատճառներից է նաեւ այն, որ ներկայացուցչական սկզբունքի կիրառման ակնկալիքի պատճառով կանայք կորցրեցին խոշորացված համայնքում հայտնի դառնալու, ընտրարշավ ծավալելու եւ ընտրապայքար մղելու ժամանակը եւ հնարավորությունը: Երրորդ պատճառը,

մտավախությունը կար: «Համայնքի կառավարումը պետք է անկախ լինի քաղաքական իշխանություններից: Սակայն 2005-ից ի վեր իրավիճակը փոխվել է. ՏԻՄ-երը, այսպես թե այնպես, կուսակցականացված են: 2005-ի հետազոտության տվյալներով, կին համայնքապետերի շատ փոքր տոկոսն էր որեւէ կուսակցության անդամ: 2006-ին այդ տույն գրեթե բոլոր անկուսակցական կանայք դարձան ՀՀԿ անդամ: Այսինքն՝ իրավիճակն այնպիսին է, որ համամասնական ընտրակարգով ընտրություններն արդարացված են», - ասում է նա: Չաքարյանը նշում է՝ քանի որ ավագանու պարագայում ռեյտինգային ընտրակարգը չկա, քվոտան արդյունավետ է գործում: Հարցին, թե ինչպես է հնարավոր ընդլայնել կանանց քաղաքական իրավունքների իրացումը, Չաքարյանն ասում է, որ հեծանիվ հայտնաբերելու կարիք չկա, գոյություն ունի տարբեր երկրների հաջողված փորձը: «Առաջինը քվոտան է, որը ժամանակավոր միջոց է, մինչեւ գենդերային կարծաթիպերը հաղթահարվեն: Բելգիան, օրինակ, վերջերս հրաժարվեց քվոտայից, քանի որ կանայք արդեն առանց քվոտաների էլ ընտրվում են», - ասում է նա: Չաքարյանը համայնքի որոշումների կայացման մակարդակում կանանց ներգրավվածության մեծացման գործում կարեւորում է նաեւ առաջնորդության դպրոցների, ընտրարշավի կազմակերպման, ՉԼՄ-ների հետ ճիշտ շփման եւ նմանատիպ թեմաներով դասընթացների դերը: «Շատ մեծ դեր կարող են կատարել Աժ կին պատգամավորները, Երեւանի ավագանու կախայք: Զանի որ նրանք տեսանե-

լի են՝ նրանց ճիշտ եւ արդյունավետ վարքը բերում է կառավարման մեջ ներգրավված կանանց իմիջի բարձրացում հասարակությունում», - ասում է նա: «Կա մի այսպիսի օրինակափոփոխություն. յուրաքանչյուր տղամարդու նույնացնում են միայն իր հետ, իսկ յուրաքանչյուր կնոջ նույնացնում են սեռի հետ: Հետեւաբար յուրաքանչյուր հաջողված պատմություն կանանց իմիջին է նպաստում: Որոշումների կայացման մակարդակի համար դա կարեւոր է», - ասում է Չաքարյանը: Չաքարյանը նաեւ նշում է, որ մեծ անելիք ունեն հասարակական կազմակերպությունները եւ կուսակցությունները. կանանց ներուժը պետք է պատրաստ լինի, որպեսզի քվոտաների բարձրացման դեպքում կարողանան բաց չառաջանա: «Տղամարդիկ մրցակցությունը սովորում են փողոցում: Կանայք կրթություն են ստանում ֆորմալ ինստիտուտներում, որտեղ նման գիտելիքներ չեն հաղորդվում: Այդ պատճառով էլ չափազանց կարեւոր են լիդերության դպրոցները, դասընթացները, ծանոթությունը միջազգային փորձին», - ասում է Չաքարյանը: Նա նաեւ նշում է, որ կարծաթիպերը ձեւավորվել են դարերով, հետեւաբար դրանց դեմ պայքարը պետք է հետետղական լինի: «Փորձը ցույց է տալիս, որ կարճաժամկետ ժամանակահատվածում կարող են հաղթահարվել կարծաթիպերը, բայց եթե հետետղական աշխատանք չի տարվում, դրանք նորից գլուխ են բարձրացնում»:

ՀԱՅԿՈՒՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
Արտասպվում է
Ankakh.com-ի
համաձայնությամբ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՈՒՆ՝ ՀԱՄԱՋՅՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՕՂԱԿ



« Խորհրդարանի կառավարման և զարգացման նախարարություն

2018թ. հունվարի 16-ին ՀՀ Խորհրդարանի կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանը հանդիպել է մարզերի խոշորագույն ու խոշոր համայնքների տնտեսական զարգացման հարցերով պատասխանատուների հետ: Աշխատանքային հանդիպմանը մասնակցել են նաև Հայաստանի զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Արմեն Ավակյանը, նախարարության հետ համագործակցող միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ մարզպետարանների ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետեր, զարգացման ծրագրերի ստորաբաժանման ղեկավարներ և համապատասխան պատասխանատու աշխատակիցներ:

Ողջունելով ներկաներին՝ նախարար Դավիթ Լոքյանն առաջնային է համարել համայնքներում առաջին փոքր տնտեսական հիմքերը դնելու հարցը, որպեսզի 2018 թվականի ավարտին հնարավոր լինի ակնկալել տնտեսական արդյունքներ: Նախարարը տեղեկացրել է, որ 2017թ. կեսերին փոխնախարար Վարազդատ Վարապետյանն իր թիմով աշխատել է մարզերում և նախարարություն ներկայացրել համայնքների տնտեսական զարգացման մեթոդական ուղեցույցը, որից հետո որոշում է կայացվել 2018-ի սկզբից բոլոր համայնքներում ունենալ տնտեսական պատասխանատուներ:

«Տնտեսական պատասխանատուն դառնալու է տվյալ համայնքի տնտեսական ծրագրերի ինֆորմացիան բոլոր կառույցներին փոխանցող առաջնային օղակը՝ մարզպետարաններին, Կառավարությանը, միջազգային կազմակերպություններին, բանկային համակարգին, վարկային կազմակերպություններին և այլ ֆինանսատնտեսական կառույցների: Դրա համար մենք չզվացանք փնտրել այնպիսի մարդկանց, ովքեր կապ ունեն տնտեսության հետ, ունեն հաղորդակցման հնարավորություններ և կարող են համայնքի զարգացմանը նպաստող քայլեր անել», -ասել է Դ. Լոքյանը, նկատելով, որ հանդիպման նպատակն է գրուցել այն մարդկանց հետ, ովքեր տարածքային զարգացման գաղափարախոսության գործընթացի շարժիչ ուժը պետք է լինեն:

Նախարարը ներկայացրել է այս աշխատանքի հիմքում դրված տրամաբանությունը՝ համայնքում ձեռավորել մոտիվացիա, քանի որ համայնքը միայն իր վարչական միջոցներով չի կարող իրականացնել իր կապիտալ ծախսերը: «Ինչքան էլ կարելու լինեն ծախսերը, համայնքը պետք է կարողանա իր ֆոնդային բյուջեում միջոցներ դնի ու ակն-

կալի դրա կրկնապատկումը պետությունից: Այստեղ շատ կարևոր է, որ համայնքը իր ռեսուրսներից կարողանա ճիշտ բյուջե կազմել: Մինչև այս տարվա մարտի 30-ը ձեզ հետ միասին պետք է



« Խորհրդարանի կառավարման և զարգացման նախարարություն

կարողանանք ստանալ սուբվենցիայի համապատասխան ծրագրեր տվյալ համայնքների հրատապ, պրոբլեմային տնտեսական, սոցիալական խնդիրները լուծելու համար և այդ նպատակով հատուկ գործիքակազմ ենք ստեղծել հա-

ղեպերին և պայմաններին: Աշխատաժողովում քննարկվել են նաև համայնքային տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման ընթացակարգը, միջազ-



« Խորհրդարանի կառավարման և զարգացման նախարարություն

այն կառույցների կողմից իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակում համայնքների հնարավորությունները, համայնքների տնտեսական պատասխանատուների վերապատրաստման դասընթացների նախնական պլանները, ինչպես նաև ոլորտային այլ հարցեր:

ՏԿԶ Նախարարի տեղակալ Վարազ-

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԸՆՆԱՐԿՈՒՄ ՀՀ
ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ



2018թ. հունվարի 18-ին ՀՀ Խորհրդարանի կառավարման և զարգացման նախարարի տեղակալ Վարազդատ Վարապետյանը բանկային համակարգի ներկայացուցիչներին պատմել է Համայնքների տնտեսության աճի վրա էական ազդեցություն ունեցող ներդրումային և գործարար ծրագրերի գնահատման նախարարության կողմից մշակված ընթացակարգի մասին:

Վ. Վարապետյանը նշել է, որ հանրապետության տնտեսության կայունության, համաչափ տարածքային զարգացման և հետագա տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ քայլերից են արդյունավետ ներդրումային քաղաքականության վարումը և բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծումը, ինչը կաշխուժացնի ներդրումային գործընթացը: Այս նպատակով ձեռավորված գնահատող հանձնաժողովի դրական եզրակացության առկայության դեպքում ՀՀ կառավարությունը կսուբսիդավորի վարկային տոկոսադրույքի չափը՝ հնարավորություն ընձեռելով բարձրացնել ընկերությունների մրցակցությունը, զարգացնել տնտեսական ենթակառուցվածքները և նպաստել ազգային ու տեղական կարևորագույն ծրագրերի արդյունավետ իրականացմանը:

Հանդիպման ընթացքում հնչեցվել են ծրագրի արդյունավետության բարձրացմանն ու ընթացակարգերի պարզեցմանն ուղղված մի շարք հարցեր: Համաձայնություն է ձեռք բերվել շարունակել աշխատանքային քննարկումները և խորացնել համագործակցությանն ուղղված ջանքերը:

Հարգելի ընթերցող,

Ի՞նչ եք մտածում ամեն անգամ «Համայնք-ՀամաՏեղ» թերթը բացելիս, ի՞նչ ակնկալիքներ ու սպասումներ ունեք, ինչի՞ մասին եք ցանկանում կարդալ, բայց չեք գտնում այստեղ: Թերթի մասին ձեր կարծիքը շատ կարևոր է մեզ համար:

Գրեք մեզ
հետևյալ հասցեով՝
Երևան, Երվանդ Զոհրաբի 20,
4-րդ հարկ կամ
madamyam@cfoamail.am
Էլ. փոստին:

